# ՍՆՆԴԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱՅԲ-ԳՀԾՁԲ-17/1

ք.Երևան
«__30__» __հոկտեմբեր__ 2017թ.

«Այբ» կրթական հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սոնա Կոշեցյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գայանե Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սննդի մատուցման ծառայությունների պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների

armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 984 570 **(ինը հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր յոթանասուն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված ժամկետում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն . պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց

հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _14__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Այբ» կրթական հիմնադրամ
ՀՀ ք. Երևան 0009, Կորյունի 19
ա 9-րդ հարկ
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1930055663050100
ՀՎՀՀ 01558429
Գործադիր տնօրեն

*Ս.Կոչեցյան*__________________
(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Բուռնազյան 7,
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570020500760100
ՀՎՀՀ 00851011
Տնօրեն

*Գ. Մարգարյան*\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-
(ստորագրություն) Կ.Տ

*Հավելված N 1*<br>*« 30 » հոկտեմբեր 2017 թ. կնքված*<br>*ԱՅԲ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Քանակը | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | Մատուցման ժամկետը և հասցեն | Դիմաց վճարման ժամկետը |
| | Սննդի մատուցման ծառայություն CPV` 55320000 | Կատարողը պետք է մատուցի`<br>1. 30.10.2017թ-ին ժամը 09:00-ին **նախաճաշ 54 հոգու համար ( Թբիլիսյան խճ. 11/11 հասցեում):**<br>Նախաճաշը ներառում է բուլկի խտացրած կաթով` 130 գրամ:<br>2. 30.10.2017թ-ին **ժամը 12:30-ին ճաշ 107 հոգու համար ( Թբիլիսյան խճ. 11/11 հասցեում):**<br>Ճաշը ներառում է տավարի կոտլետ, 150 գրամ, բրինձ հավով` 250 գրամ, աղցան կաղամբով և գազարով` 120 գրամ, հացիկ` 50 գրամ, լավաշ` 50 գրամ, բն. հյութ` 0,25լ: Աղցանը, գառնիրը և մսային ուտեստը մատուցվում է մեկանգամյա օգտագործման փակվող տարրայով (Lunchbox), նյութը` պոլիստիրոլ, մեկանգամյա օգտագործման պատառաքաղներով:<br>3. 30.10.2017թ-ին **ժամը 18:30 ընթրիք 25 հոգու համար (Մ Խորենացի 28 հասցեում):**<br>Ընթրիքը ներառում է հավի կոտլետ, 130 գրամ, մակարոն բանջարեղենով` 250 գրամ, աղցան քամած մածուն վարունգով` 120 գրամ, հացիկ` 50 գրամ, լավաշ` 50 գրամ, բն. հյութ` 0,25լ: Աղցանը, գառնիրը և մսային ուտեստը մատուցվում է մեկանգամյա օգտագործման փակվող տարրայով (Lunchbox), նյութը` պոլիստիրոլ, մեկանգամյա օգտագործման պատառաքաղներով:<br>4. 31.10.2017թ-ին ժամը **09:00-ին նախաճաշ 54 հոգու համար( Թբիլիսյան խճ. 11/11 հասցեում):**<br>Նախաճաշը ներառում է բուլկի ջամիչով` 130 գրամ:<br>5. 31.10.2017թ-ին **ժամը 13:30-ին ճաշ 107 հոգու համար ( Թբիլիսյան խճ. 11/11 հասցեում):**<br>Ճաշը ներառում է լյուլա քյաբաբ հավի, 150 գրամ, համեմունքներով խորոված կարտոֆիլ` 250 գրամ, աղցան մառոլով, ոլոռով և լոլիկով` 120 գրամ, հացիկ` 50 գրամ, լավաշ` 50 գրամ, բն. հյութ` 0,25լ: Աղցանը, գառնիրը և մսային ուտեստը մատուցվում է մեկանգամյա օգտագործման փակվող տարրայով (Lunchbox), նյութը` պոլիստիրոլ, մեկանգամյա օգտագործման պատառաքաղներով:<br>6. 31.10.2017թ-ին **Ժամը 18:30 ընթրիք 25 հոգու համար (Մ Խորենացի 28 հասցեում):**<br>Ընթրիքը ներառում է հավի խորոված, 130 գրամ, հաճար, սունկ` 250 գրամ, աղցան թաբուլե` 120 գրամ, հացիկ` 50 գրամ, լավաշ` 50 գրամ, բն. հյութ` | դրամ | 1 | 984 570 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2017 թ-ի նոյեմբերի 03-ը ներառյալ: /ք.Երևան Թբիլիսյան խճ 11/11 և ք.Երևան, Մ Խորենացի 28 հասցեներում / | Հանձնման ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից հաշված 5 բանկային օրվա ընթացքում: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 0,25լ: Աղցանը, զառնիրը և մսային ուտեստը մատուցվում է մեկանգամյա օգտագործման փակվող տարայով (Lunchbox), նյութը` պոլիստիրոլ, մեկանգամյա օգտագործման պատառաքաղներով:<br>7. 01.11.2017թ-ին ժամը 09:00-ին **նախաճաշ 54 հոգու համար ( Թբիլիսյան խճ. 11/11 հասցեում):**<br>Նախաճաշը ներառում է բուլկի շոկոլադով` 130 գրամ<br>8. 01.11.2017թ-ին **ժամը 11:30-ին ճաշ 106 հոգու համար ( Թբիլիսյան խճ. 11/11 հասցեում):**<br>ճաշը ներառում է հավի կոտլետ, 150 գրամ, խորոված բանջարեղեն` 250 գրամ, աղցան կաղամբով, ոլոռով և գազարով` 120 գրամ, հացիկ` 50 գրամ, լավաշ` 50 գրամ, բն. հյութ` 0,25լ: Աղցանը, զառնիրը և մսային ուտեստը մատուցվում է մեկանգամյա օգտագործման փակվող տարայով (Lunchbox), նյութը` պոլիստիրոլ, մեկանգամյա օգտագործման պատառաքաղներով:<br>9. 01.11.2017թ-ին **ժամը 18:30-ին ընթրիք 25 հոգու համար (Մ Խորենացի 28 հասցեում):**<br>Ընթրիքը ներառում է տավարի կոտլետ, 130 գրամ, սպագետտի` 250 գրամ, աղցան գազարով` կորեական` 120 գրամ, հացիկ` 50 գրամ, լավաշ` 50 գրամ, բն. հյութ` 0,25լ: Աղցանը, զառնիրը և մսային ուտեստը մատուցվում է մեկանգամյա օգտագործման փակվող տարայով (Lunchbox), նյութը` պոլիստիրոլ, մեկանգամյա օգտագործման պատառաքաղներով:<br>10. 02.11.2017թ-ին **ժամը 09:00-ին նախաճաշ 53 հոգու համար ( Թբիլիսյան խճ. 11/11 հասցեում):**<br>Նախաճաշը ներառում է բուլկի ջեմով` 130 գրամ:<br>11. 02.11.2017թ-ին **ժամը 13:00-ին ճաշ 106 հոգու համար ( Թբիլիսյան խճ. 11/11 հասցեում):**<br>ճաշը ներառում է հավի լանգետ, 150 գրամ, մակարոն` 250 գրամ, աղցան թաբուլե` 120 գրամ, հացիկ` 50 գրամ, լավաշ` 50 գրամ, բն. հյութ` 0,25լ: Աղցանը, զառնիրը և մսային ուտեստը մատուցվում է մեկանգամյա օգտագործման փակվող տարայով (Lunchbox), նյութը` պոլիստիրոլ, մեկանգամյա օգտագործման պատառաքաղներով:<br>12. 02.11.2017թ-ին **ժամը 18:30-ին ընթրիք 25 հոգու համար (Մ Խորենացի 28 հասցեում):**<br>Ընթրիքը ներառում է լյուլա քյաբաբ հավի, 130 գրամ, տապակած ծաղկակաղամբ` 250 գրամ, աղցան քամած մածուն վարունգով` 120 գրամ, հացիկ` 50 գրամ, լավաշ` 50 գրամ, բն. հյութ` 0,25լ: Աղցանը, զառնիրը և մսային ուտեստը մատուցվում է մեկանգամյա օգտագործման փակվող տարայով (Lunchbox), նյութը` պոլիստիրոլ, մեկանգամյա օգտագործման պատառաքաղներով:<br>13. 03.11.2017թ-ին **ժամը 11:30-ին ճաշ 106 հոգու համար ( Թբիլիսյան խճ. 11/11 հասցեում):**<br>ճաշը ներառում է հավի կոտլետ, 150 գրամ, կարտոֆիլի խյուս` 250 գրամ, հացիկ` 50 գրամ, լավաշ` 50 գրամ, բն. հյութ` 0,25լ: Աղցանը, | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | զառնիրը և մայրին ուտեստը մատուցվում է մեկանգամյա օգտագործման փակվող տարայով (Lunchbox), նյութը՝ պոլիստիրոլ, մեկանգամյա օգտագործման պատառաքաղներով: | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Այբ» կրթական հիմնադրամ
ՀՀ ք. Երևան 0009, Կորյունի 19 ա 9-րդ հարկ
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1930055663050100
ՀՎՀՀ 01558429
Գործադիր տնօրեն

Ս. Կոչեցյան____________
(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Բունթաղյան 7,
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570020500760100
ՀՎՀՀ 00851011
Տնօրեն

Գ. Մարգարյան____________
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
«______» __________________ 2017 թ. կնքված
ԱՅՔ-ԳՀԾՁՔ-17/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
______________________________
հվհհ _________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
______________________________
հվհհ _________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «                    » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը` ______________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը` __________
Պատվիրատուն` ի դեմս ______________________________________________
Պայմանագրի կողմը` ի դեմս ______________________________________________ և Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. կազմված` գնման հայտը, ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված` ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին` կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները`

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը: ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | քանակական ցուցանիշը: փաստացի | կատարման ժամկետը: ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | կատարման ժամկետը: փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 2.1
«______» __________________ 2017 թ. կնքված
ԱՅՔ-ԳՀԾՁՔ-17/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և __________-ի

Կատարողի անունը Պատվիրատուի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________-ին կնքված N ____________________

պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ______-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

Հանձնեց

հայտը ներկայացուցիչ՝

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն

Ընդունեց

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն